



Տ. Տ. Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա. Վ. Ե. ՀԱՓԱՌ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Մ Ե Կ Ն Ո Ւ Մ

Հունվարի 12-ին, Երեւնաբքի, օղնականու-
թյամբն Աստուծո, Տ. Տ. Վաղգնն Ա Ամենայն
Հայոց Հայրապետը ձեռնարկեց արտասահ-
ման կատարելիք Իր հինգերորդ հովվապե-
տական ուղեորութեան:

Պատմական այս ուղեորութեան հիմնական
նպատակն էր, եթովպիայի Կայսր Նորին Վե-
հափառութեան Հայկ-Սեւասիե Ա-ի սիրալիր
հրավերով, մասնակցել հունվարի 18—23
օրերին Ադդիս-Աբեբայում գումարվելիք
արեւելյան ուղղափառ հինգ եկեղեցիների պե-
տերի համաժողովին, որպէս Գերագույն Պետ
Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու:

Վեհափառ Հայրապետը, օգոստոսի 8-ին,
Մայր Աթոռում ստանում էր Մոսկվայում
եթովպական դեսպան Նորին Գերազանցու-
թեան Միքայել Էմրուի ձեռամբ, Կայսրի 1964
մայիս 18 թվակիր պաշտօնական հետեւյալ
հրավերը.


«Ձերդ Սրբութեան.

Հանուն մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի,
Մենք հղում ենք Ձեզ սիրալիր և ջերմագին
ողջույններ:

Մեր հայրերի Աստուծո՝ ամենակալ Տիրոջ
կամբով, Մեր զահակալութեան օրվանից,
Մեր մեծ փափագն է եղել տեսնել պատմա-
կան արեւելյան ուղղափառ քույր եկեղեցիների
և եթովպական Ուղղափառ եկեղեցու ներկա-
յացուցիչներին հավաքված մի սեղանի
շուրջ, Մեր մայրաքաղաքում, հավատի իրենց
միութեանը ամրապնդելու, իրենց բարի եղ-
բայրական հարաբերութեանները սերտացնե-
լու և իրենց հասարակաց խնդիրները միա-
տեղ, խորհրդակցաբար լուծելու համար:

Մեր այս ազնիւ նպատակի իրագործումը,
այսինքն Աստուծո թագավորութեան հաստա-
տումը տեսնելու ցանկութեամբ, Մենք վեր-
ջապես որոշեցինք գումարել այդպիսի մի
ժողով:

Մեր եկեղեցական մեծ հայրերը նախ հան-
դիպեցին միմյանց նիկիայում, ապա Կոս-
տանդնուպոլսում, և վերջապէս Եփեսոսում:
Հակառակ, որ շատ երկար մի ժամանա-
կաշրջան է անցել այդ օրվանից, արեւելյան
ուղղափառ քույր եկեղեցիների հավատի
միութեան ոգին պահպանվել է: Սույն իրո-

[illegible]

Կալսերական հրավերի բնագիրը

դուժյունը քաջալերել է Մեզ հրավիրելու սույն ժողովը: Եթե մեր եկեղեցիների ներկայացուցիչները հանդիպեն միմյանց մի անգամ էս, կասկած չկա, որ հասարակաց հավատը ավելի կգործառնա:

Այլ եկեղեցիներ և հարանվանություններ
ունեն իրենց հատուկ առանձին ժողովները,

քննարկելու համար իրենց հասարակաց խնդիրները և ամրապնդելու իրենց միությունը: Այժմ, առավել քան երբեք, երբ եկեղեցիներն ունեն մեծ պատասխանատվություններ և կարիք ավելի զորացման, շատ համար է, որ մեր եկեղեցիների ղեկավարները ևս հանդիպեն միմյանց՝ քննարկելու համար հասարակաց խնդիրներ և փոխադասակնու մտքեր: Ձեռք Սրբությունը պաշտոնողական է այսպիսի մի ժողովի մեծ պահանջին և օգտակարություն:

Մեր փափազն է, հետևաբար, որ այս հինգ բույր եկեղեցիները հանդիպեն միմյանց, հավատի իրենց միությունը զորացնելու, հասարակաց հետաքրքրություն ներկայացնող կետերը քննարկելու, հասարակաց իրենց խնդիրները լուծելու և հաստատակեն քրիստոսի բաժանյալ ենկեղեցու վերջնական վերամիավորման ճանապարհորհարքի համար:

Մենք երջանիկ ենք հրավիրելու արևելյան ուղղափառ բույր եկեղեցիների ղեկավարների այսպիսի մի ժողով, որ տեղի է ունենալու այստեղ՝ Ադդիս-Աբեբայում, Մեն այսպրապաշարում, 1964 թվականի սեպտեմբերի 25-ից մինչև 1964 թվականի հոկտեմբերի 5-ը:

Անձնական խորին հարգանքներով դեպի
Զորդ Սրբությունը, Մենք սույն հրավերը
հղում ենք Զեզ հուսարով, որ Զորդ Սրբու-
թյունը կկարողանա ներկա լինել և մաս-
նակցել, սույն ժողովին:

Մաղթում ենք Ձերդ Սրբության ամենայն բարիք Աստուծուդ և քաջառողջություն»:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, իր օգոստոս 17 թվակիր պաշտոնական գրությամբ, պատասխանում էր նորին Վեհափառության վերահիշյալ հրավերին, հայտնելով՝ իր սկզբունքային համաձայնություներ՝ ուրախությամբ մասնակցելու Աղդիս-Արեբբայի ժողովին, գլխավորելով մեկ կ անբաժան Հայաստանյայց եկեղեցու պատվիրակությանը:

Նորին Ս. Օժուխյունը այնուհետև նույն ոգով պաշտոնական գրություններ ուղղեց նաև օգոստոս 18 և 21 թվակիր իր նամակներով Եթովպական Եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Աբունա Բասիլիոսին ներկայացնելով մի անգամ ևս այս առիթով Մայր Աթոռիս սկզբունքային տեսակետը՝ թե «Ինչպես մեր մյուս քույր Եկեղեցիները, նույնպես և Հայ Եկեղեցին պետք է մասնակցի Ադրիս-Աբեբայի ժողովին մեկ և անբաժան պատվիրակությամբ մը, գլխավորված Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմեն, համաձայն մեր Եկեղեցվո զարավոր կանոններուն և ավանդություններուն՝ Սեր Եկեղեցվո նվիրապետութան տեղական մուս Աթոռները»։

Տանն Կրիկիտ, Երուսաղեմի և Կ. Պոլսո, Կրնան անշուշտ մաս կազմել Հայ Եկեղեցվո միակ պատվիրակության, սակայն չեն կրնար ներկայացնել առանձին պատվիրակություններ: Ջերմապետ Կիսրեբյանը Ջեզմե, որ հաճիք մտախօսող պարզել այս հարցը և խնայել Մեղրի անհարմար կացության մեջ գտնվող Աղդիս-Արեբայի ժողովի ընթացքին: Հաճեցեք ինչպես որ եթե Տանն Կրիկիտ Կաթողիկոսը իր հետևորդներով պիտի մասնակցի Աղդիս-Արեբայի ժողովին առանձին պատվիրակությամբ՝ անջատ Մեղր գլխավորած պատվիրակությունեն, Մենք հարկադրված պիտի ըլլանք վերաբնեւել ժողովին Հայ Եկեղեցվո մասնակցության հարցը: Վեհափառ Հայրապետի 18 օգոստոս 1964 թվակիր հրավերին, ուղղված Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսին՝ մասնակցելու Աղդիս-Արեբայի ժողովին՝ Իր կողմից Հայ Եկեղեցու միակ պատվիրակության կազմում՝ ժխտական պատասխան ստանալով հոկտեմբեր 29-ին և հիմնվելով նաև Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի Աթոռների գահակալների և բոլոր թեմակալ առաջնորդների Մայր Աթոռ զրավոր կերպով հայտնված տեսակետների վրա, Նորին Ս. Օծուխունը նոյեմբերի 18-ին մի անգամ ևս պաշտոնական գրությամբ ուղարկեց Կայսրին, խնդրելով, որ «Ջերդ Վեհափառությունն ու Նորին Սրբություն Արուսեա Բասիլիսը բարի ըլլաք վերջնական եզրակացության մը հանգելու և բարեհաճելու Մեզ տեղյակ պահելու այդ մասին, որպեսզի ի վիճակի ըլլանք Մեր որոշումը հայտնելու Ջերդ Վեհափառության, Աղդիս-Արեբայի ժողովին Հայ Եկեղեցվո մասնակցության մասին»:

Գեկտեմբեր ամսի սկզբներին, Մոսկվայում եթովպական դեսպան Նորին Գերազանցությունն պր. Միքայել էմրուն, ժամանելով Մայր Աթոռ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին անձամբ հանձնեց կայսերական 1964 հոկտեմբեր 31 թվակիր և նոյեմբեր 24 թվակիր Եթովպիայի Կայսեր և Եթովպիայի Պատրիարքի նամակները, որոնցով հայտնվում էր Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին, թե Աղդիս-Արեբայի ժողովին Հայ Եկեղեցին ներկայացված կլինի Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, և որը կունենա գերագահ զորք և նախապատվություն՝ բոլոր առիթներով:

Աղդիս-Արեբայից ստացված սույն պատասխանները գոհացուցիչ չգտնելով, Վեհափառ Հայրապետը պր. դեսպանին պաշտոնապես հայտնեց և զրավոր մի նամակ ուղղեց Կայսրին, թե Ամենայն Հայոց Կաթողիկոսը պիտի չկարենա մասնակցել ժողովին

և գլխավորել Հայ Եկեղեցու պատվիրակությունը:

Գեկտեմբերի 31-ին Մայր Աթոռ ժամանեց Մոսկվայի եթովպական դեսպանատան առաջին քարտուղար պր. Կոբեզե Թաֆֆեդեն, որը Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնեց Հայլե Սելասիե Ա Կայսեր 22 դեկտեմբեր 1964 թվակիր պաշտոնագիրը, որով Նորին Վեհափառությունը, անդրադառնալով Հայ Եկեղեցու մասնակցության հարցին, հայտնում էր իր կայսերական վճիռը, թե «այժմ Մենք իրականացրինք Ջերդ Սրբության ցանկությունը, որ Հայաստանյայց Եկեղեցին պետք է մասնակցի միակ պատվիրակությամբ, Ջերդ Սրբության դեկլարությամբ, ինչ որ Մենք ճանաչում ենք և որը հաճելի է Մեզ»:

Աղդիս-Արեբայի արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների պետերի համաժողովին Հայ Եկեղեցու միակ պատվիրակությամբ մասնակցելու հարցը վերջնականապես ընդունված լինելով, Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը որոշեց անձամբ մասնակցել այդ ժողովին և գլխավորել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատվիրակությունը:

Վեհափառ Հայրապետը սույն ոգով հեռագրեր ուղարկեց Տ. Տ. Խորեն Ա Կաթողիկոսին, Տ. Նիդե և Տ. Շնորհք սրբազան պատրիարքներին, հրավիրելով նրանց մաս կազմել պատվիրակության մեջ և միասնաբար ներկայացնել Հայոց Եկեղեցին Աղդիս-Արեբայի արևելյան ուղղափառ եկեղեցիների միջեկեղեցական ժողովին:

Վեհափառ Հայրապետը, մեկնելուց առաջ, Աղդիս-Արեբայից ստացավ հունվար 9 թվակիր մի հեռագիր ևս, արքունիքի մինիստրի ստորագրությամբ՝ փոխանցված Մոսկվայի եթովպական դեսպանի միջոցով, հետևյալ բովանդակությամբ. «Որոշված է, որ Հայ Եկեղեցին պիտի գլխավորվի Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից միայն»:

Նորին Ս. Օծուխունը, ընդունելով պաշտոնական այս հավաստագրումները, որոշեց մեկնել Աղդիս-Արեբա, անձամբ ողջունելու նաև քրիստոսապաշակ Նորին Վեհափառություն Հայլե Սելասիե Ա Կայսրին, դավանակրից և բույր Եթովպական Եկեղեցու հոգևորականությանը և ժողովրդին և մասնակցելու միջեկեղեցական այս պատմական ժողովին:

Այս բարեպատեհ առիթով, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը որոշել էր նաև այցելել հեռավոր Աֆրիկայի կենտրոնում, Եթովպիայի հյուրընկալ երկնքի տակ ապրող

իր հոգևոր զավակներին, հայ համայնքին և անձամբ տանել Մայր Աթոռ Ս. էջմիածնի օրհնություններն ու վերածնված Մայր Հայրենիքի հայությունն եղբայրական սիրալիր ողջունները:

Նորին Ս. Օծուխյունը դեպի Ադդիս-Աբեբա իր ուղևորության ճանապարհի վրա, ծրագրել էր մի քանի օրով մնալ նաև Կահիրեում, ջերմ հրավերովը եգիպտահայ բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբե արքեպիսկոպոս Սիրուելյանի, այս ուրախ առիթով իր օրհնությունները տալու եգիպտոսի իր սիրեցյալ համայն ժողովրդին:

Այնուհետև, ուղևորության ծրագրի մեջ նախատեսվում էր, փետրվարի սկզբներին, Վեհափառ Հայրապետի այցելությունը Փարիզ, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Մեռավրե արքեպիսկոպոս Մանուկյանի սրտագին հրավերով:

Վեհափառ Հայրապետի կատարելիք սույն հինգերորդ ուղևորությունը արտասահման, 1965 թվականի առաջին ամիսներին, հանդիսանում էր նույնպես կարևոր իրադարձություն, Սփյուռքի մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ, մանավանդ ապրիլյան եղբունի 50-ամյակը, համազգային հանդիսություն, նույն առիթով Նորին Ս. Օծուխյան գրած օգոստոս 17 թվակիր կոնդակի ոգով նշելու կապակցությամբ:

Հունվարի 10-ին, կիրակի, երեկոյան ժամը 4-ին, Մայր Աթոռ Ս. էջմիածնից ճանապարհ ընկնելուց առաջ, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում էր Մայր Տաճար՝ աղոթելու բարեհաջող ուղևորության համար. «Տէ՛ր, ուղղեա՛ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան»:

Միաբանության անունից Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ է մաղթում Տ. Սահակ արքեպիսկոպոս Տ. Հովհաննիսյանը:

Երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Երևանի օդանավակայանը:

Նորին Ս. Օծուխյան բարի ճանապարհ մաղթելու համար այստեղ էին եկել Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի, վերստուգիչ հանձնաժողովի անդամները, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը, Մայր Աթոռի պաշտոնեությունը, Արարատյան թեմի թեմական, եկեղեցական խորհուրդների անդամները, քահանայից դասը և այլ պաշտոնական անձնավորություններ և հավատացյալների բազմություն:

Վեհափառ Հայրապետին ճանապարհում է նաև Հայկական ՍՍՄ Մինիստրների սովե-

տին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Ժամը 5.15-ին ինքնաթիռը անջատվում հայրենի հողից և բարձրանում է եթեր, ուղևորություն վերցնելով դեպի Մոսկվա, բոլոր ներկաների սրտագին բարեմաղթությունները:

Վեհափառ Հայրապետի սույն ուղևորության կապակցությամբ, Մայր Աթոռի դիվանի կողմից արվում է 1965 հունվար 10 թվակիր հետևյալ պաշտոնական հաղորդագրությունը.

«Նորին Ս. Օծուխյան Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, Եթովպիայի Վեհափառ Կայսեր հրավերով, հունվարի 10-ին եկնեց դեպի Ադդիս-Աբեբա, մասնակցելու արևելյան եկեղեցիների ժողովին, անձամբ գլխավորելով Հայ Եկեղեցու միակ պատվիրակությունը:

Վեհափառ Հայրապետը սիրալիր հրավեր ուղղած է Տանն Կիլիկիո, Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց Աթոռների գահակալներին՝ մասնակցելու ժողովին Հայ Եկեղեցու պատվիրակության մեջ, Իր կողքին»:

Սույն ուղևորության ժամանակ Վեհափառ Հայրապետին ուղեկցում են Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և վրահայոց առաջնորդ Տ. Կամիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, գավազանակիր Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը և Մայր Աթոռի պաշտոնաթերթ «էջմիածին» ամսագրի խմբագրապետ Ա. Հատիտյանը:

Վեհափառ Հայրապետի շքախմբի մեջ են հրավիրված և իրենց մասնակցությունն են բերում Ադդիս-Աբեբայի հանդիսություններին Տ. Մամբե արքեպիսկոպոս Սիրուելյանը (Կահիրեից), Տ. Մեռուպ ծայրագույն վարդապետ Գրիգորյանը (Վիեննայից) և Տ. Զավեն ծայրագույն վարդապետ Չինչինյանը (Ալեքսանդրիայից):

Հունվարի 10-ին, կիրակի, երեկոյան ժամը 8.30-ին, Մոսկվայի Վնուկովոյի օդանավակայանում, Վեհափառ Հայրապետին դիմավորում են Տ. Կամիտաս և Տ. Պարզե եպիսկոպոսները, Մոսկվայի հայոց եկեղեցական խորհրդի անդամները և հավատացյալները:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին դիմավորում է նաև Մոսկվայում եթովպական դեսպան Նորին Գերագեցություն Մի-ֆայել էմրուն:

Նորին Ս. Օծուխյան դիմավորում են նաև ՍՍՄ Մինիստրների սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահի տեղակալ Ռյազանովը, խորհրդի աշխատակից Սոլովյովը:

Հայոց Վեհափառ Հայրապետին դիմավորում է նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաֆյանը:

Հունվարի 13-ին, շոբեֆշաբբի, առավոտյան ժամը 8-ին, Մոսկվայի Շերեմետևոյի միջազգային օդանավակայանում, Վեհափառ Հայրապետին և շքախմբի անդամներին ճանապարհում են Մայր Աթոռի միաբանության, Մոսկվայի Հայոց եկեղեցու հոգևորականության, եկեղեցական խորհրդի անդամները:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ճանապարհում է նաև Եթովպիայի դեսպան պր. Միֆայել էմրուն:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ողջերթ էին մաղթում նաև ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր Կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահի տեղակալ Ռյազանովը, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաֆյանը և պաշտոնական այլ անձինք:

